ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ -18/5» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստ

ք. Երևան 29 դեկտեմբերի 2017թ. Ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պ. 25/2, բն. 20	karen.nersisyan@natksystems.com

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցը՝ «ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

4.1 Բավարար է գնահատվել «ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ մասնակցի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող հայտը: Բավարար գնահատված հայտում առկա է հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը և հայտի ապահովումը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

5.1 «ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ մասնակիցը կազմել և ներկայացրել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

6.1 Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար «Համակարգերի և օգտագործողի ծրագրերի մշակման ծառայությունների (Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի արդիականացման ծառայություն)» ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	«ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ	
1	«Համակարգերի և օգտագործողի ծրագրերի մշակման ծառայությունների (Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի արդիականացման ծառայություն)»	Գինն առանց ԱԱՀ	14 000 000 /տասնչորս միլիոն/ ՀՀ դրամ
		Ընդհանուր գինը	14 000 000 /տասնչորս միլիոն/ ՀՀ դրամ

Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկում չկան թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

7.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆԱՍՏ ՍԻՍՏԵՄԱ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

7.2 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

7.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը և 61-րդ կետի 1-ին ենթակետը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել, որպեսզի սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ համաձայն Հրավերի տեքստի հավելված N 5 և հավելված N 5.2-ի, և հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

8. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

8.1 Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

9.1 Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության ստացման և մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու հաջորդող օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Զաքարյան

_____ Գ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան